ՀՊՏՀ ռեկտոր Կորյուն Աթոյանի շնորհավորանքի խոսքը նոր՝ 2012-2013 ուսումնական տարվա մեկնարկի կապակցությամբ

Սիրելի՛ ուսանողներ, առաջին կուրսեցիներ, շնորհավորում եմ Ձեզ նոր ուսումնական տարվա մեկնարկի կապակցությամբ: Սիրելի՛ առաջին կուրսեցիներ, այսօրը հատկապես հիշարժան է Ձեզ համար, ուստի ես առանձնահատուկ շնորհավորում եմ Ձեզ՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ուսանողներ դառնալու կապակցությամբ՝ ողջունելով Տնտեսագիտական համալսարանը նախընտրելու ձեր որոշումը: Նոր ուսումնական տարվա սկիզբը, որը խորհրդանշում է սեպտեմբերի 1-ը՝ գիտելիքի օրը, բեկումնային նշանակություն կարող է ունենալ ձեր հետագա գործունեության, որպես մարդ, անհատ և մասնագետ ձևավորվելու առումով: Սիրելի՛ ուսանողներ, դուք համալսարան ոտք եք դրել նոր գիտելիքներ ձեռք բերելու և լավ մասնագետ դառնալու հավակնությամբ: Եվ դուք չե՛ք սխալվել: Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը բարձր հեղինակություն է վայելում Հայաստանի կրթական համակարգում: Արդեն շուրջ մեկ տարի է, մեր բուհը «Մենք փոխվում ենք» կարգախոսի ներքո ընթանում է բարեփոխումների ճանապարհով, որը ներառում է բուհական կյանքի տարբեր ոլորտներ՝ սկսած բուհի հեղինակության բարձրացմանը միտված բրենդային քայլերից մինչև կրթական, ուսումնական գործընթացի տարատեսակ փոփոխություններ:

Առաջի՛ն կուրսեցիներ, այս նախնական տեղեկատվությունն առավել կարևոր է ձեզ համար, քանի որ ձեր ավագ ընկերներն արդեն տեղյակ են բուհում կատարվող փոփոխություններից:

Ցանկանում եմ վստահեցնել, որ բուհի ղեկավարությունն անելու է ամեն ինչ, որպեսզի ձեր ուսումնառության տարիները լինեն բովանդակալից և հետաքրքիր: Անշուշտ, հնարավոր է հանդիպեք նաև դժվարությունների, բայց հուսով եմ, որ ըմբռնումով կմոտենաք՝ գիտակցելով, որ ձեր հարազատ բուհը առաջընթացի և նոր վերելքներ արձանագրելու ճանապարհին է: Առաջին օրերին դուք կծանոթանաք մեր բուհի ուսումնառության կազմակերպման գործընթացին, անցուդարձին և, կարծում եմ, հետզհետե այն ձեզ համար կդառնա հարազատ: Իմացեք նաև, որ ես բաց եմ քննարկումների և ուսանողների դրական նախաձեռնությունների համար. դուք կարող եք անվարան ներկայացնել ձեր լավ գաղափարները՝ այդպիսով ունենալով նաև ձեր ներդրումը մեր հարազատ կրթօջախի բարեփոխումների ճանապարհին:

Սիրելի՛ ուսանողներ, ևս մեկ անգամ շնորհավորում եմ ձեզ, մաղթում օգտաշատ ուսումնառություն և հիշարժան ուսանողական կյանք։
Հարգանքով՝
ՀՊՏՀ ռեկտոր Կորյուն Աթոյան

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ